

NATIONAL ACADEMY OF SCIENCES THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARTS

ARMENIAN
TRADITIONAL MUSIC
SERIES

Issue XIII

СЕРИЯ
АРМЯНСКАЯ
ТРАДИЦИОННАЯ МУЗЫКА

Выпуск XIII



ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍԻՏՈՒՏ

ՀԱՅ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՐԱԺԾՏՈՒԹՅՈՒՆ ՄԱՏԵՆԱԾԱՐ

Պրակ I



ԵՐԵՎԱՆ, 2015

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСКУССТВ

ИЗБРАННЫЕ МАТЕРИАЛЫ ИЗ ЭКСПЕДИЦИЙ АРАМА КОЧАРЯНА

НАРОДНЫЕ ПЕСНИ

СОСТАВИТЕЛИ — МАРГАРИТ САРГСЯН, МАРИАННА ТИГРАНЯН

РЕДАКТОРЫ ВЫПУСКА
З. ТАГАКЧЯН, Р. ПИКИЧЯН

ARAM KOCHARYAN

EXPEDITION SELECTED

FOLK SONGS

COMPILERS – MARGARIT SARGSYAN, MARIANNA TIGRANYAN

ISSUE EDITORS
Z. TAGAKCHYAN, H. PIKICHIAN



ԱՐԱՄ ՔՈՂԱՐՅԱՆԻ ԳԻՏԱՐԾԱՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԸՆՏՐՄԱՆԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ԿԱԶՄՈՂՆԵՐ՝
ՍԱՐԳԱՐԻՏ ՍԱՐԳՍՅԱՆ
ՍԱՐԻԱՆՆԱ ՏԻԳՐԱՆՅԱՆ

ՊՐԱԿԻ ԽՄԲԱԳԻՐՆԵՐ՝
Զ. ԹԱԳԱԿՉՅԱՆ, Հ. ՊԻԿԻՉՅԱՆ

ՀՏԴ 781.7
ԳՄԴ 85.31
Ա. 830

ՅՐԱՏԱՐԱՎԿՎԾ Ե ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐՈՎ
ИЗДАНО ПО ГОСУДАРСТВЕННОМУ ЗАКАЗУ
STATE ORDER PUBLICATION

ՀՐԱՏԱՐԱՎԿՈՒՄ Է ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՍԱՄԲ

ՄԱՏԵՆԱԾԱՐԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ

Զ. ԹԱԳԱԿՅԱՆ, **[Կ. ԽՈՒԴԱԲԱՇՅԱՆ]** (գլխավոր խմբագիր),
Ժ. ՄԵՀՐԱԲՅԱՆ, Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ,
Հ. ՊԻԿԻՉՅԱՆ (գլխավոր խմբագրի տեղակալ)

ՊԵЧАТАЕТСЯ ПО РЕШЕНИЮ УЧЕНОГО СОВЕТА
ИНСТИТУТА ИСКУССТВ НАН РА

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ СЕРИИ:

3. ՏԱԳԱԿՅԱՆ, **[Կ. ԽՈՒԴԱԲԱՇՅԱՆ]** (главный редактор),
Ж. ՄԵՀՐԱԲՅԱՆ, А. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ,
Р. ՊԻԿԻՉՅԱՆ (зам. главного редактора)

PUBLISHED BY THE DECISION OF THE SCIENTIFIC COUNCIL
OF THE INSTITUTE OF ARTS NAS RA

SERIES EDITORIAL BOARD:

Z. TAGAKCHYAN, **[K. KHUDABASHYAN]** (editor-in-chief),
ZH. MEHRABYAN, A. BAGHDASARYAN,
H. PIKICHIAN (vice-principal editor)

Արամ Քոչարյանի գիտարշավային նյութերի ընտրանի. (“Դայ ավանդական երաժշտություն”
Ա. 830 մատենաշար): Պրակ 13 / Կազմ.՝ Սարգսյան Մարգարիտ, Տիգրանյան Մարիաննա.- Ամրոց գրուա,
2015.- 144 էջ:

ISMN 979-0-69380-097-1

ՀՏԴ 781.7
ԳՄԴ 85.31

© ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ, 2015թ.
© «Ամրոց գրուա», 2015թ.

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ ԳԱՍՏ Արվեստի ինստիտուտի ճայնադարձանում պահպող Արամ Քոչարյանի ֆոնդը¹ դժվար է գերազանցած լիք կատարել իրեն ավանդական երաժշտության ճայնագրյալ նյութերի և ուսումնասիրությունների բազմաժանությունը ու արժեքավոր հավաքածուն: Գրանցված նմուշները գեղարվեստական բարձր արժեք ներկայացնելուց բացի՝ նաև ժամանակի լրջագույն վավերագրեր են, ժողովրդական բանասացների և պրոֆեսիոնալ երաժշտների փայլուն կատարումների բնօրինակ արձանագրություններ:

«Հայ ավանդական երաժշտություն» մատենաշարի ներկա՝ XIII հատորում ընդգրկել ենք Ա. Քոչարյանի ֆոնդային հավաքածուի ժողովրդական ավանդական երգերի գրառումները՝ շարունակելով լրացնել այդ հավաքածուից արդեն հրատարակված նմուշներ պարունակող ժողովածուների շարքը: Հիշեցնենք, որ մատենաշարի VIII հատորում² տեղ է գտել Ա. Քոչարյանի հավաքածուի 60 պարերգ՝ ժագումով ալաշկերտցի Հալաջօղյան քույրերի կատարմամբ: 2012 թ. լույս տեսած VII հատորը³ ներկայացնում է դեռևս 1976 թ. Ա. Քոչարյանի կազմած «Էջեր հայ վիպական երգաստեղությունից» ժողովածուն⁴, որտեղ ընդգրկված նմուշներից 25-ը նրա գրառումներն են, այդ թվում՝ 5-ը՝ նշված հավաքածուից: Աշուղական արվեստի լավագույն նմուշներն ամփոփող գիտնականի «Աշուղական սիրավեպեր» աշխատությունը հրատարակվել է մատենաշարի X հատորում⁵, որտեղ ներկայացված են վաստակաշատ երաժշտագետի գրանցած ամբողջական սիրավեպեր, հատվածներ սիրավեպերից, ինչպես նաև աշուղական երգերի նմուշներ: Մատենաշարի IV հատորում⁶ ընդգրկված է Ա. Քոչարյանի հավաքածուից 9 գործաներգ:

Այս ամենից զատ՝ վաստակաշատ բանահավաք-երաժշտագետի ճայնադարձանային հավաքածուն պարունակում է տարբեր ժանրերի մեծաքանակ նմուշներ՝ աշուղական, նվազարանային, ժողովրդական-հոգևոր, ինչպես նաև այլ լեզուներով կատարված երգեր, որոնք հետազոտություն լույս կտեսնեն Մատենաշարի առանձին հատորներում: Նշված ժանրերի մի ստվար քանակ՝ բերկրիցի բանասաց Մովսես Տեր-Հովհաննիսյանի կատարմամբ՝ նպատակահարմար է հրատարակել առանձին հատորով, քանզի քանասացը ներկայացնում է ոչ միայն ժողովրդական ավանդական երգերի, այլև աշուղական արվեստի 118 նմուշ՝ հայերեն և քրդերեն լեզուներով:

XIII հատորում աշխատել ենք ի մի բերել ժողովրդական ավանդական երգարվեստի տարբեր ժանրերի երգերը, որոնք ներկայացնում են Պատմական և Խորհրդային Հայաստանի մի քանի շրջանների երաժշտական մշակույթը:

Հատորում ընդգրկված երգերը գիտնականի կողմից գրառվել են 1939-1941 թթ. ունտգենային սկավառակների վրա, որից հետո դրանք մի քանի անգամ փոխադրվել են տարբեր կրիչների, ի վերջո՝ մազմիտոֆոնային ճայներիկների վրա, որի հետևանքով՝ ճայնագրությունների որակը խաթարվել է, ուստի հնարավոր չի եղել ամբողջապես վերծանել երգերի բանաստեղծական տեքստերը: Այդու-

¹ Սարգսյան Մ., Արամ Քոչարյանի ժողովրդական հավաքածուն՝ ըստ ՀՀ ԳԱՍՏ արվեստի ինստիտուտի ճայնադարձանային ֆոնդի, //Արամ Քոչարյան. Ծննդյան 100-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, 2004, էջ 16:

² Ալաշկերտի ավանդական երգեր //Հայ ավանդական երաժշտություն, կազմող՝ Ա. Սարգսյան, պրակ VІІІ, Երևան, 2012, «Ամրոց գրուպ»: Այսուհետ՝ ՀԱԵՄ VІІІ:

³ Հայ վիպական երգեր //Հայ ավանդական երաժշտություն, կազմող՝ Ա. Քոչարյան, պրակ VII, Երևան, 2012, «Ամրոց գրուպ»: Այսուհետ՝ ՀԱԵՄ VII:

⁴ Նոյն տեղում, էջ՝ 20:

⁵ Աշուղական սիրավեպեր //Հայ ավանդական երաժշտություն, կազմող՝ Ա. Քոչարյան, պրակ X, Երևան, 2014, «Ամրոց գրուպ»: Այսուհետ՝ ՀԱԵՄ X:

⁶ Հայ երկրագործի աշխատանքային երգեր //Հայ ավանդական երաժշտություն, կազմող՝ Զ. Թագակչյան, պրակ IV, Երևան, 2009, «Ամրոց գրուպ»: Այսուհետ՝ ՀԱԵՄ IV:

հանդերձ, գիտակցելով դրանց արժեքն իբրև մշակութային և պատմական ինքնատիպ վավերագրեր, հարկ ենք համարել լսելիության հնարավոր սահմաններում վերծանել և ներկայացնել հանրությանը:

Ա. Քոչարյանի հավաքածուն առհասարակ, և այս հատորի համար ընտրված երգերի օրինակները՝ մասնավորապես, բացառիկ են նաև օժտված բանասացների յուրօրինակ կատարումներով: Ժողովածուում ներկայացված բանասացներն ինն են՝ Զեղո Չիրբայիլյանը, Նուրինը, Մխիթար Թումոյանը, Մարկոս Պոլուզյանը, Մշեցյանների ընտանիքը (ցավոք, նրանց անունները և ստույգ թիվը հայտնի չեն, հավանաբար՝ երկու կամ երեք տղամարդ), Հալաջօղլյան քույրերը՝ Արաքսին և Ասանեթը, աշուղներ Արշակ Սարգսյանը և Շահեն Սարգսյանը: Բանասացների մասին տեղեկությունները տրված են առանձին բաժնով, սակայն նրանց կատարողական առանձնահատկությունների և ժամանակակից նախասիրությունների մասին հարկ ենք համարում խոսել այստեղ:

Ավելորդ է նշել, որ յուրաքանչյուր բանասաց ունի երաժշտության ընկալման և վերարտադրման իր ուրույն կերպը, պահպանում է իր ծննդավայրին և բնակավայրին բնորոշ բարբառը, իսկ ալաշկերտցի աշուղ Արշակը և Մխիթար Թումոյանը պարերգերը և սիրերգերը երգում են հայերեն և քրդերեն լեզուներով: Հատուկնենտ քուրքերեն բառեր են հանդիպում Շատախսի Նուրինի և Շահեն Սարգսյանի երգած նմուշներից մի քանիսում, մյուս բանասացների երգերը միայն հայերեն են՝ տվյալ բնակավայրին բնորոշ բարբառով և խոսվածքով: Ի դեա՝ օտարալեզու բառեր բացառապես չեն հանդիպում ծիսական երգերում, քանզի դրանք խիստ կանոնակարգված, բանաձևային մտածողությամբ կառուցված հնագույն երգեր են:

Սովորաբար, աշուղի կատարմամբ ավանդական ժանրերի երգերը դուրս են գալիս ժանրային սահմաններից՝ կրելով աշուղի ստեղծագործական մտածողության և կատարողական ոճի ազդեցությունը: Այդուհանդերձ, թե՛ աշուղ Արշակը, և թե՛ աշուղ Շահենը փորձում են հարազատ մնալ ավանդական ժանրերի առանձնահատկություններին: Աշուղ Արշակը գրեթե բոլոր երգերը նվազակցում է սազով, երգերի տներն ընդմիջելով միջնանվազով, այսինքն՝ աշուղական արվեստին բնորոշ կատարողական եղանակով:

Հավաքածուում մեծ թիվ են կազմում պարերգերը, սիրերգերը, իսկ ներկայիս հատորում նաև՝ ծիսական-հարսանեկան երգերը, որոնք հատկապես արժեքավոր և ծանրակշիռ են դարձնում սույն ժողովածուն: Բոլոր բանասացները, բացի Հալաջօղլյան քույրերից (երկու երգ)⁷ առանձնահատուկ հանդիսավորությամբ և ավանդական բանաձևային մտածողությամբ են կատարում հարսանեկան ծեսի տարբեր արարողակարգերի երգերը, որոնցից 20 լավագույնները տեղ են գտել ժողովածուում: Մշեցյան ընտանիքի անդամները պահպանել են փոխելիքին երգեցողության ավանդական ձևը, Նուրինի, Զեղոյի, Մխիթար Թումոյանի և Մարկոս Պոլուզյանի հանդարտ, հանդիսավոր կատարումները ևս բնորոշ և հարազատ են հնագույն ժանրին և աղերսներ ունեն հոգևոր երգերի հետ: Աշուղ Արշակի սազով նվազակցությունը յուրահատուկ արևելյան երանգ է հաղորդել ավանդական ժանրին, իսկ աշուղ Շահենի ինքնատիպ մեկնարանություններն ավելի բնորոշ են նրա ստեղծագործական անհատական ոճին: Ցավոք, թե՛ աշխատանքային, թե՛ ծիսական և զինվորագրության ժանրերի բոլոր երգերն այսօր արդեն արարողակարգի և գործառույթի հետ կենցաղից դուրս են մղվել և հիմնականում ազգագրական խմբերի երգացանում են տեղ գտնում: Ուստի մեր հատորում ներկայացված բացառիկ նմուշներն առավել կարևոր են իբրև գիտական-պատմական վավերագրեր: Պարերգի, սիրերգի և հայրենասիրական երգերի հանդեպ հետաքրքրությունը ժողովողի մեջ դեռ արթուն է, և որոշ վայրերում դրանք այսօր էլ կենցաղավարում են: Հատորում ներկայացված երգերի հետ համեմատելիս կարելի է պատկերացում կազմել այդ ժանրերի զարգացման, դրանց վրա ժամանակի բողած ազդեցության և գործառությային որոշ առանձնահատկությունների վերաբերյալ:

Երգերը դասդասելիս՝ հաշվի ենք առել ժանրային և ժամանակային պատկանելությունը՝ հնա-

⁷Տե՛ս ՀԱԵՍ VIII:

գույններից մինչ համեմատաբար ուշ ստեղծվածները: Ըստ այդմ՝ խմբավորել ենք հետևյալ հաջորդականությամբ՝ 1. **Աշխատանքային**, 2. **Ծխական** (ա. Սուրբ ծննդյան ավետիսներ, թ. ուստագնացության, գ. Համբարձման տոնի, դ. հարասնեկան), 3. **Պարերգեր**, 4. **Պատմական-հայրենասիրական**, 5. **Զինվորագրության**, 6. **Սիրերգեր**, 7. **Անեծք**, 8. **Կատակերգեր**:

Հատորը պարունակում է՝ 1. նախարան, 2. երգերի նոտագիր և բանաստեղծական տեքստեր, 3. ծանոթագրություններ, որտեղ տրված են նմուշների հերթական համարները, ձայններիզի և ձայնագրության ֆոնդային համարները, բանասացի անունը, վերծանողի անունը, հրատարակված ժողովածուներում տվյալ նմուշի տարբերակների տվյալները, ինչպես նաև կազմողների կողմից որոշ դիտարկումներ, 4. օտարալեզու և բարբառային բառերի բառարան, 5. տեղեկություններ բանասացների մասին, 6. ներկայացված նմուշների տարբերակները պարունակող հրատարակված այլ ժողովածուների և դրանց հապավումների ցանկ, 7. երգերի այբբենական ցանկ, 8. բովանդակություն:

Պահպանվել է Մատենաշարում ընդունված երաժշտարանաստեղծական տողերի տարածաշատման կարգը (ուսումնական): Յուրաքանչյուր նոր տող սկսվում է գիշագրով, կրկնակային տողերը՝ խորքից, իսկ բափառիկ խաղիկների տողերը՝ եզրից: Եթե նմուշը չունի կրկնակ, ապա բոլոր տողերը համընկնում են ուղղահայաց գծով, բացի առաջին տողից, որը սկսվում է մի փոքր խորքից՝ համաձայն նոտագրման մեջ ընդունված կարգի: Յուրաքանչյուր տաճ ավարտը նշված է կրկնակի տակտի գծով:

Նոտաների տակ գրված բանաստեղծական տեքստում շեղագրով նշված են բանասացի կողմից հավելված հնչյունները, մասնավորապես՝ շատախցի բանասաց Նուրինի երգերում, որտեղ ձայնավորներից առաջ հնչում է փափուկ **յ** կիսաձայնը: Հաճախ բանասացները վանկեր են ավելացնում համապատասխան վանկաչափ ստեղծելու նպատակով: Առանձին ներկայացվող բանաստեղծական տեքստում գաղտնավանկի **լ** հնչյունները գրվել են միայն այն դեպքերում, երբ առանց դրանց կիսախտվեր բանաստեղծական կառույցի վանկաչափը: Այն տեղերում, երբ բառերն ընդհանրապես չեն լսվել, դրվել է կետագիծ:

Բանասացների վերաբերյալ տեղեկությունները վերցված են տարբեր աղբյուններից. աշուղ Արշակ Սարգսյանի համառոտ կենսագրությունը՝ **ՍԼՀԺՀՊԹՆ I հատորից**, Հալաջօղյան քույրերի մասին համառոտ տվյալները՝ **ՀԱԵՄ VIII պրակից**, Զերոն Զիրքայիլյանի մասին տվյալները՝ **ՀԱԵՄ VII հատորից՝ Ա. Քոչարյանի անձնական գրառումներից**: Աշուղ Շահեն Սարգսյանի և նրանից գրառված երգերի վերաբերյալ տեղեկությունների, ինչպես նաև բանաստեղծական տեքստերի որոշ շտկումների համար հատուկ շնորհակալություն ենք հայտնում աշուղի դստերը՝ երաժշտագետ Էլինար Սարգսյանին: Ցավոք, մյուս բանասացների՝ Նուրինի, Մխիթար Թումոյյանի, Մարկոս Պոլուզյանի և Մշեցյանների ընտանիքի մասին այլ տվյալներ չեն պահպանվել, բացի իրենց բնակավայրերի անուններց և երգերի ձայնագրման տարբերվեց, որոնք գրանցված են **ԳԱԱ Արվեստի ինտիտուտի** ժողովրդական երաժշտության բաժնի արխիվում, Արամ Քոչարյանի ֆոնդի թ. 40 թղթապանակում:

Հատորի երաժշտական օրինակները ձայնագրություններից վերծանել և հրատարակության են պատրաստել **ՀՀ ԳԱԱ Արվեստի ինտիտուտի** ժողովրդական երաժշտության բաժնի գիտաշխատողները. երաժշտական տեքստերի վերծանությունը՝ Մ. Սարգսյանը և Մ. Տիգրանյանը, բանաստեղծական տեքստերը՝ Հ. Պիկիչյանը, նոտային օրինակների համակարգչային շարվածքը՝ Մ. Սարգսյանը և Ա. Հակոբյանը, ծանոթագրությունները կազմել են Մ. Սարգյանը, Մ. Տիգրանյանը և Ա. Հակոբյանը, բառարանը՝ Ա. Հակոբյանը, նմուշների վերնագրերը ոռուերեն է բարգմանել Մատենաշարի գլխավոր խմբագիր, վաստակաշատ գիտնական Կ. Սարգսյան-Խուրդարաշյանը, իսկ նախարանը բարգմանել են՝ Ն. Սարգսյանը՝ ոռուերեն և Ն. Միքայելյանը՝ անգլերեն:

Մարգարիտ Սարգսյան